ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՍՅԱ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ – ԱՊՐԻԼ, 2021թ.

WORLD BANK GROUP
Macroeconomics, Trade & Investment

- *Տնտեսական ակտիվությունը սկսեց ցույց տալ վերականգնման նշաններ, երբ տնտեսության կրճատման տեմպը դանդաղեց փետրվարին, իսկ վերջին շրջանում բարելավվեց մարդկանց շարժունակությունը: Ինչևէ, «ՔՈՎԻԴ-19»-ով վարակման դեպքերի աճը կարող է սանձահարել վերականգնման ընթացքը:*
- *Գնաճը մարտին բարձրացավ՝ կազմելով 5.8 տոկոս, որը պայմանավորված էր պարենի միջազգային գների աճով և ՀՀ դրամի արժեզրկմամբ:*
- *Առևտրային մնացորդը բարելավվեց, ընդ որում արտահանումը վերականգնվեց, իսկ ներկրման ցածր ծավալները պահպանվեցին ներքին ակտիվության աստիճանական աճի արդյունքում:*
- *Հիմնականում ծախսերի ծավալների աճի հետևանքով փետրվարին բյուջեն գրանցեց դեֆիցիտ:*
- *Տնտեսական հեռանկարը շարունակեց ծանր ազդել բանկային ոլորտի վրա, քանի որ միջնորդական ծառայությունների տեմպը դանդաղեց, իսկ հուսալիության ցուցանիշները վատթարացան:*

Փետրվարին ՆՏՆԺՀ տնտեսական ակտիվության ցուցիչը (ՏԱՑ) կրճատվեց 5.3 տոկոսով՝ վերականգնվելով հունվարի ՆՏՆԺՀ 8.2 տոկոս կրճատման համեմատ: Արդյունաբերությունում (որտեղ ՆՏՆԺՀ տեղի ունեցավ 5 տոկոսի անկում) արձանագրվեց կրճատման ավելի ցածր տեմպ փետրվարին, մինչդեռ շինարարության ոլորտը ՆՏՆԺՀ աճեց 1.1 տոկոսով: Ծառայությունների և առևտրի ոլորտները (որտեղ ՆՏՆԺՀ տեղի ունեցավ համապատասխանաբար 12 և 11 տոկոսի անկում) մնում են ծանր վիճակում: Կուտակային արտահայտությամբ ՏԱՑ-ը նվազեց 6.7 տոկոսով 2021թ. առաջին երկու ամսում: Քանի որ 2020թ. Մարտ ամսից սկսած «ՔՈՎԻԴ-19»-ի հետևանքով տնտեսական ակտիվությունը դանդաղեց, ապա սպասվում է, որ ՆՏՆԺՀ աճի տեմպը կուժեղանա գալիք ամիսներին: Կանխատեսվում է ՀՆԱ-ի 3.4 տոկոսի աճ 2021թ.[1] ելնելով այն ենթադրությունից, որ չեն լինի նոր սահմանափակումներ, իսկ քաղաքական լարվածությունը կվերանա:

Տնտեսական ակտիվության վերականգնման վրա կարող է բացասաբար ազդել «ՔՈՎԻԴ-19»-ով վարակման դեպքերի աճը: Վերջին շաբաթներին Հայաստանում օրական գրանցվեց վարակման շուրջ 900 դեպք (փետրվարին արձանագրված 200-ի համեմատ), երբ օրական կտրվածքով թեսթերի դրական պատասխանների թիվը, որը փետրվարին 6 տոկոս էր, ապրիլի սկզբին գերազանցեց 20 տոկոսը: Ինչևէ, դեպքերի աճը չի ուղեկցվել լրացուցիչ սահմանափակումներով, և նախաքվիդյան մակարդակի համեմատ փետրվարին գրանցված միջինում 75 տոկոս շարժունակությունը ապրիլի սկզբին բարձրացավ 86 տոկոսի: Պատվաստումները սկսվեցին մարտին, բայց դրանց կատարման տեմպին խոչընդոտում է նա, որ ստացված պատվաստանյութի քանակությունը սահմանափակ է: Մինչ օրս Հայաստանը ստացել է 17000 չափաբաժին «Sputnik V» և 24,000 չափաբաժին «Astra Zeneca» պատվաստանյութ:

Մարտին ՆՏՆԺՀ գնաճը է՛լ ավելի մեծացավ՝ հասնելով 5.8 տոկոս մակարդակին և դրանով իսկ խախտելով ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ-ի) նպատակային գնաճի միջակայքի վերին շեմը: Սա պայմանավորված էր որոշ ապրանքների, հատկապես սննդամթերքի միջազգային գների աճով, ինչպես նաև ՀՀ դրամի արժեզրկման ազդեցությամբ: Գների աճ է տեղի ունեցել սպառողական զամբյուղի համարյա բոլոր ապրանքների մասով, իսկ մարտին սննդամթերքի և ոչ ալկոհոլային ըմպելիքների գները ՆՏՆԺՀ բարձրացան 7.4 տոկոսով (փետրվարին ՆՏՆԺՀ 7.8 տոկոսով աճից հետո): Որոշ պարենային ապրանքների, օր.՝ հավկիթի, գները համարյա կրկնապատկվեցին Սբ. Զատիկի տոներից առաջ: Հաշվի առնելով փետրվարին 25 բազային կետով վերաֆինանսավորման տոկոսադրույքի աճը և պահանջարկի ընդհանուր ցածր մակարդակը՝ ՀՀ ԿԲ խորհուրդը մարտի 16-ին որոշեց անփոփոխ թողնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը, այն է՝ 5.5 տոկոս:

Փետրվարին ՆՏՆԺՀ արտահանման ծավալները փոքր-ինչ (2 տոկոսով) նվազեցին, մինչդեռ պահպանվեց ներկրման թույլ դինամիկան, ինչը հանգեցրեց առևտրային մնացորդի բարելավմանը: Օգտակար հանածոների արտահանման ուղղությամբ գրանցված աճը, որը պայմանավորված էր պղնձի ավելի բարձր գներով (նույնիսկ պղնձի արտահանման ծավալների անկման պարագայում), չեզոքացնող ազդեցություն ունեցավ սննդամթերքի և թանկարժեք քարերի արտահանման ծավալների կրճատման վրա: Ներկրման գործառնությունները փետրվարին ՆՏՆԺՀ նվազեցին 13.6 տոկոսով՝ արտացոլելով ներքին պահանջարկի դանդաղ վերականգնումը: 2021թ. առաջին երկու ամսում առևտրային դեֆիցիտը ՆՏՆԺՀ նվազեց 30 տոկոսով: Ելնելով վերջերս հրապարակված 2020թ. վճարային հաշվեկշռի (ՎՀ) տվյալներից՝ ընթացիկ հաշվի դեֆիցիտը բարելավվել է՝ 2019թ. ՀՆԱ-ի 7.2 տոկոսի համեմատ կազմելով 2020թ. ՀՆԱ-ի 3.1 տոկոսը, քանի որ ներկրման ծավալների էական կրճատումը մասամբ չեզոքացվեց 2020թ. ՆՏՆԺՀ մասնավոր տրանսֆերտների 12 տոկոսով նվազման արդյունքում:

ՀՀ դրամը շարունակեց մնալ ճնշման տակ: Մինչև ապրիլի 8-ը դրամն արժեզրկվեց 2 տոկոսով, համեմատած նախորդ ամսվա հետ, բերելով ՀՀ ԿԲ միջամտությանը՝ արտարժույթի փոխարժեքի կտրուկ փոփոխությունները հարթելու նպատակով: Եվրոպարտատոմսերի ստացման արդյունքում միջազգային պահուստները փետրվարին աճեցին՝ հասնելով 3.2 մլրդ ԱՄՆ դոլար մակարդակին, բայց մարտի վերջին նվազեցին՝ կազմելով 3 մլրդ ԱՄՆ դոլար: Ամեն դեպքում, պահուստներն ապահովում են մոտավոր 7 ամսվա ներկրումների ծածկույթ: ՆՏՆԺՀ դրամական ներհոսքերն աճեցին 7 տոկոսով (ԱՄՆ-ից եկող ներհոսքերի աճը չեզոքացրեց Ռուսաստանից եկող ներհոսքերի ծավալի նվազումը), մինչդեռ փետրվարին ՆՏՆԺՀ արտահոսքերը կրճատվեցին 4 տոկոսով:

Հունվարին 65 մլրդ դրամի հավելուրդ ունենալուց հետո փետրվարին բյուջեն գրանցեց 47 մլրդ դրամի դեֆիցիտ: Վերջինս պայմանավորված էր ծախսերի կտրուկ աճով (ՆՏՆԺՀ 10 տոկոս սոցիալական և 75 տոկոս կապիտալ ծախսերի աճ) և ՆՏՆԺՀ եկամուտների 6 տոկոս նվազմամբ: Փետրվարին ՆՏՆԺՀ ԱԱՀ-ի գծով հավաքագրումները կտրուկ կրճատվեցին, ինչը մասամբ չեզոքացվեց ակցիզային հարկերից և մաքսատուրքերից ստացված մուտքերի աճով (ՆՏՆԺՀ համապատասխանաբար 16 և 21 տոկոսով): Փետրվարի վերջի դրությամբ բյուջեն ունեցավ 18 մլրդ դրամի կուտակային հավելուրդային մնացորդ:

[1] Համաշխարհային բանկի ամենաթարմ կանխատեսումները տես՝ https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/35273/9781464816987.pdf?sequence=4&isAllowed=y

Բանկային ոլորտի աճի տեմպի դանդաղումը շարունակվեց, իսկ հուսալիության ցուցանիշները թուլացան փետրվարին: Վարկերը (ճշգրտված փոխարժեքային փոփոխություններով) ՆՏՆԺՀ կրճատվեցին 2 տոկոսով, թեպետ շինարարության ոլորտին տրամադրվող և հիպոթեքային վարկերի ծավալը մեծացավ: Ավանդները ևս նվազեցին 2 տոկոսով ՆՏՆԺՀ, իսկ չաշխատող վարկերը փետրվարի վերջին աճեցին՝ կազմելով 7.5 տոկոս, մինչդեռ շահութաբերության ցուցանիշները ընկան: Կապիտալի համարժեքության ցուցանիշը մնաց շուրջ 17 տոկոսի մակարդակում, ինչը 12 տոկոս նվազագույն շեմից շատ ավելի բարձր է:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվությունը պահպանում է իր շատ աստիճանական դինամիկան
(Տնտեսական ակտիվության ցուցիչ, ՆՏՆԺՀ փոփոխություն, տոկոս)



Աղբյուրը ՝ՀՀ Վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 2. Գնաճը կտրուկ աճեց՝ հատելով ՀՀ ԿԲ-ի նպատակային միջակայքի վերին շեմը
(ՍԳՑ գնաճ, ՆՏՆԺՀ փոփոխություն, տոկոս)



Աղբյուրը ՝ՀՀ ԿԲ

Գծապատկեր 3. Առևտրային դեֆիցիտը շարունակեց նեղանալ, երբ արտահանման համեմատ ներկրման ծավալներն ավելի կրճատվեցին
(մլն ԱՄՆ դոլար)



Աղբյուրը ՝ՀՀ Վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 4. Բյուջեի հավելուրդը նվազեց փետրվարին ավելի մեծ ծախսերի կատարման արդյունքում
(մլրդ ՀՀ դրամ)



Աղբյուրը ՝ ՖՆ

Գծապատկեր 5. Պահուստներն աճեցին փետրվարին եվրոպարտատոմսերի ստացման արդյունքում, բայց նվազեցին մարտին
(մլն ԱՄՆ դոլար)



Աղբյուրը ՝ՀՀ ԿԲ

Գծապատկեր 6. Դրամը շարունակեց արժեզրկվել ԱՄՆ դոլարի համեմատ
(ցուցիչ, 2020թ. մարտի 2=100)



Աղբյուրը ՝ՀՀ ԿԲ